

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11  
ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

27. 04. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը, Ա.Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս. Խալաթյանը, Ն.Սարգսյանը, Ս.Դուբայանը, Ա.Աղլոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Ա.Չատինյանը - ԱԽՆ, Լոռու մարզային վարչության ներկայացուցիչ

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց ՝

1. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Չանգվածային լրատվամիջոցներով տեղեկատվություն ներկայացնել մարզի ազգաբնակչությանը Հայկական ակնաբուժական կենտրոնի կողմից Լոռու մարզ կատարվելիք այցելությունների վերաբերյալ :

2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝

Վանաձորի քաղաքապետարանի և Բանակային կորպուսի հրամանատարության հետ համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկություններ Հաղթանակի 70-ամյակի միջոցառումների անցկացման վերաբերյալ:

/ Ժամկետ՝ 3 օր /

3. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝ Անհրաժեշտ իրազեկման աշխատանքներ իրականացնել համապատասխան համայնքներում ս/թ մայիսի 17-ին նախատեսված հանրաքվեի անցկացման ուղղությամբ:

/ Ժամկետ՝ 20 օր /

4. Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Ուսումնասիրել Օձուն համայնքի արտավայրերի վարձավճարների սահմանման և դրանց գանձման խնդիրները և ներկայացնել առաջարկություններ:

/ Ժամկետ՝ 10 օր /

5. Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ն.Սարգսյանին՝

Սերտ համագործակցություն իրականացնել մարզի համայնքների ղեկավարների, ոստիկանության և այլ շահագրգիռ մարմինների հետ անչափահասների կողմից հակաիրավական արարքները կանխարգելելու, պարտուսից դուրս մնալու խնդիրների լուծման ուղղությամբ և ներկայացնել տեղեկատվություն:

/ Ժամկետ՝ 1 ամիս /

ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Արձ. Ս. Մակարյան  
Հեռ. 0322/4-32-99/



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ